

ՀԱՆՐԱՅԻՆ
ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԿՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ



«Արտակարգ դրության ժամանակ մեդիայի աշխատանքն ու մեդիայի վերաբերյալ սահմանափակումները»

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՏՐՅԱՆ
ՀԼԱ, 2020

Հանրային լրագրության ակումբ

Հ Ե Տ Ա Ջ Ո Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Արտակարգ դրության ժամանակ
մեդիայի աշխատանքն ու մեդիայի
վերաբերյալ սահմանափակումները»

*Ինչպես կառավարությունների կողմից սահմանափակվեց մեդիայի գործունեությունը
Հայաստանում և մի շարք այլ երկրներում՝ լրագրողների, ՉԼՄ-ների համար բարդ և
հաճախ անհասկանալի դրություն ստեղծելով:*

Հարություն Ծատրյան

ՀԼՄ, 2020

**«Արտակարգ դրության ժամանակ մեդիայի աշխատանքն ու
մեդիայի վերաբերյալ սահմանափակումները»**

Ինչպես կառավարությունների կողմից սահմանափակվեց մեդիայի գործունեությունը Հայաստանում և մի շարք այլ երկրներում՝ լրագրողների, ՉԼՄ-ների համար բարդ և հաճախ անհասկանալի դրություն ստեղծելով:

Բովանդակություն

❖ Իրավիճակ	2
❖ Մեդիայի աշխատանքի սահմանափակումները Հայաստանում	3
❖ Մեդիայի աշխատանքի սահմանափակումն աշխարհում	11
❖ Եզրահանգումներ	14

❖ **Իրավիճակ**

2020 թ.-ի մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) գլխավոր տնօրեն Թեդրոս Գեբրեյեսուսը [հանդես եկավ հայտարարությամբ՝](#) որպես համավարակ որակելով նոր կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19), որը դեռ 2019-ի դեկտեմբերին հայտնաբերվել էր Չինաստանում, իսկ հետագայում արագորեն տարածվել էր ամբողջ աշխարհով մեկ: Հաշված օրերի ընթացքում վարակը ստիպեց աշխարհի բազմաթիվ երկրների իշխանություններին կոշտ քայլեր ձեռնարկել և արագորեն արձագանքել, որոշ դեպքերում՝ համավարակի տարածումը կանխելու նպատակով և ստեղծված համաճարակային վիճակի հիմնավորմամբ աշխարհի տարբեր երկրներում հայտարարվեց արտակարգ դրություն: Արտակարգ դրություն հայտարարվեց նաև Հայաստանում: 2020թ.-ի մարտի 16-ին ՀՀ կառավարությունը հաստատեց [298 - Ն որոշումը՝](#) Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին:

Դեռ մարտի 1-ին Հայաստանում [գրանցվել էր](#) նոր կորոնավիրուսային հիվանդությամբ վարակման առաջին դեպքը: Վարակակիրը ՀՀ 29-ամյա քաղաքացի էր, որը Թեհրանից Երևան էր ժամանել փետրվարի 28-ին: Փետրվարի երկրորդ կեսին հարևան Իրանում արդեն համաճարակային իրադրություն էր, որին ի պատասխան ՀՀ կառավարության [որոշմամբ](#) փետրվարի 25-ից մասամբ փակվել էր Հայաստան-Իրան օդային և ցամաքային սահմանը (թույլատրվում էր միայն բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների մուտքը Հայաստան, ընդ որում՝ մեքենայում կարող էին լինել առավելագույնը երկու հոգի՝ վարորդն ու նրան փոխարինող վարորդը, սահմանը բաց է մնում նաև երկու երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցների ու նրանց ընտանիքների համար):

Արտակարգ դրության հայտարարման կառավարության որոշման հիմքերը մի քանիսն էին, սակայն առաջին հերթին ընդգծվում էր Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի հայտարարությունը նոր տեսակի կորոնավիրուսը (COVID-19) համավարակ որակելու մասին և Վաղարշապատ քաղաքում վարակի տարածման հետևանքով համաճարակային իրադրությունը՝ որպես համաճարակի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակ, որը սպառնում է բնակչության կյանքին և հանրային առողջությանը և կարող է հանգեցնել անձանց

կենսագործունեության բնականոն պայմանների խախտման: Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով հայտարարվեց արտակարգ դրություն, որը երկու անգամ 30 օրով երկարաձգվեց՝ ապրիլին և մայիսին:

Արտակարգ դրության մասին կառավարության որոշումն ուներ 7 էջանոց հավելված, որում ուղիղ անդրադարձ և սահմանափակումներ կային նաև մեդիայի գործունեության վերաբերյալ: **VII գլուխը** վերնագրված էր «Չանգվածային լրատվության միջոցներով առանձին հրապարակումների, հաղորդումների արգելքները», այն բաղկացած էր չորս փոխկապակցված դրույթերից:

Այսպիսով՝ մարտի 16-ին Հայաստանում հայտարարված արտակարգ դրության իրավական ռեժիմը ժամանակավոր սահմանափակումներ էր նախատեսում մեդիայի գործունեության համար:

❖ Մեդիայի աշխատանքի սահմանափակումները Հայաստանում

Կառավարության հաստատած 298 - Ն որոշման հավելվածում «Չանգվածային լրատվության միջոցներով առանձին հրապարակումների, հաղորդումների արգելքները» վերնագրված գլխի 23-ից 26 փոխկապակցված դրույթներում մասնավորապես հստակեցվում էր, թե ինչն է արգելվում ելնելով տվյալ իրավական ռեժիմից՝

23. Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքներից դուրս վարակման առկա և նոր դեպքերի, անձանց առողջական վիճակի, վարակի աղբյուրների, առկա կամ հնարավոր վարակակիր անձանց հետ շփված այլ անձանց շրջանակի, զննում (վարակի թեստավորում) անցնող անձանց և մեկուսացվածների քանակի, ինչպես նաև խուճապի հանգեցնող կամ խուճապային իրադրություն ստեղծելու վտանգ պարունակող տեղեկությունների վերաբերյալ հրապարակումների, տեղեկատվական նյութերի, հարցազրույցների, հաղորդումների (այսուհետ՝ հաղորդում) հրապարակային տարածումը, փոխանցումը, ներառյալ՝ ինտերնետային կայքերում և սոցիալական ցանցերում դրանց հրապարակումների ձևով, ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների կողմից կատարվում է միայն պարետատան կողմից տրամադրված տեղեկատվությանը (այսուհետ՝ պաշտոնական տեղեկատվություն) հղում կատարելով:

24. Մույն կարգի 23-րդ կետերով սահմանված հաղորդումները չպետք է հակասեն պաշտոնական տեղեկատվությանը և պետք են հնարավորինս վերարտադրեն այն:

25. Մույն գլխով սահմանված սահմանափակումները չեն կիրառվում պետական պաշտոնատար անձանց կողմից կատարված հաղորդումների կամ նրանց հաղորդումներին կատարված հղումների նկատմամբ:

26. Մույն գլխով սահմանված դրույթների խախտմամբ կատարված հաղորդումները ենթակա են անհապաղ վերացման այն կատարած անձանց կողմից:

Փաստորեն, նոր կորոնավիրուսային հիվանդության տարածմամբ պայմանավորված արտակարգ դրությունը լիարժեքորեն կիրառվեց հանրային օրակարգի գլխավոր

թեման լուսաբանելու, ՉԼՄ-ների կողմից թեմատիկ հրապարակումների վերահսկում իրականացնելու համար: Մեդիայի աշխատանքի այսօրինակ վերահսկողությունը դժգոհություն առաջացրեց բազմաթիվ ՉԼՄ-ների կողմից: Արտակարգ դրություն հայտարարելու օրը՝ մարտի 16-ին խմբագիրները, որոնք հրավիրվել էին կառավարություն քննարկման համար, փոխըմբռնման և ընդհանուր հայտարարի չէին եկել:

Վերոնշյալ 4 դրույթների հետ կապված պարզաբանումներ ստանալու նպատակով Հայաստանի ժուռնալիստների միության նախաձեռնությամբ [գրավոր](#) դիմում էր ուղարկվել ՀՀ փոխվարչապետ, արտակարգ դրության ժամանակ պարետ Տիգրան Ավինյանին: Դիմումը ստորագրած շուրջ երեք տասնյակ ՉԼՄ-ների ներկայացուցիչների համար ամենաանհասկանալի վիճելի դրույթների հետ կապված «խուճապ առաջացնող տեղեկատվության» սահմանումն ու գնահատումն էր, քանի որ հանրայնացված չափորոշիչներ չկային, և մտավախությունն այն էր, թե պարետատնից կարող էին կամայականորեն և ընտրողաբար սահմանափակել մեդիայի աշխատանքը:

Մեդիայի հրապարակումների և առանձին հաղորդումների սահմանափակման մեխանիզմը շատ պարզ էր աշխատում, չնայած այդպես էլ չափորոշիչներ չէին ներկայացվել վերոնշյալ 4 հիմնական դրույթների և «խուճապ առաջացնող տեղեկատվություն» սահմանման վերաբերյալ: Վարչապետի աշխատակազմին կից գործող «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ում աշխատող մոնիթորինգային թիմը՝ շուրջ 15 աշխատող¹, մեդիայի, սոցիալական ցանցերում անհատ հաշիվների ամենժամյա մշտադիտարկում էր իրականացնում և «Չանգվածային լրատվության միջոցներով առանձին հրապարակումների, հաղորդումների արգելքները» գլխում ներկայացված դրույթները հաշվի առնելով՝ առանձնացվում էին այն հրապարակումները, որոնք «արգելված էին», տվյալներն ուղարկվում էր ոստիկանություն: Ոստիկանությունն իր հերթին գործողություններ էր ձեռնարկում հրապարակումների հեռացման ուղղությամբ՝ կապվելով լրատվամիջոցների ներկայացուցիչների կամ անհատ հեղինակների հետ:

Հատկանշական է, որ սկզբնական շրջանում կարգադրվել էր լրատվամիջոցներին արտակարգ դրությամբ պայմանավորված մինչև ապրիլի 14-ը հրապարակել նոր կորոնավիրուսային հիվանդության հետ կապված միմիայն պաշտոնական տեղեկատվություն, որի առաջնային խողովակը [Հայկական միասնական տեղեկատվական կենտրոնն էր](#): Այն Ֆեյսբուք սոցիալական կայքում պաշտոնապես հաստատված (verified) էջ ուներ: Ավելի ուշ ստեղծվեց «Կորոնավիրուսի դեմ պայքարի միասնական տեղեկատվական հարթակ» կայքը՝ ՀՀ կառավարության պաշտոնական կայքի ենթադոմեյնային հասանելիությամբ՝ <https://covid19.gov.am/hy>: Մեդիային խրախուսվում էր նաև պաշտոնական տեղեկատվության համար հետևել ՀՀ վարչապետ [Նիկոլ Փաշինյանի](#), ՀՀ առողջապահության նախարար [Արսեն Թորոսյանի](#) և ԱՆ խոսնակ [Ալինա Նիկողոսյանի](#) ֆեյսբուքյան էջերին, ինչպես նաև ՀՀ ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի պաշտոնական կայքին՝ <https://ncdc.am/>:

Ազգային ժողովում մարտի 16-ին հրավիրված հատուկ նիստին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, [անդրադարձնալով լրատվամիջոցների աշխատանքի սահմանափակման թեմային](#), նշել էր, թե բոլոր այն **անձինք և լրատվամիջոցները**, ովքեր կորոնավիրուսի հետ կապված կտարածեն կեղծ տեղեկատվություն, կենթարկվեն

¹ Աշխատողների թիվը և աշխատատեղը ճշգրտվել է ՊՈԱԿ-ի տնօրեն Հովհաննես Մովսիսյանից:

պատասխանատվության. «Ուզում եմ կրկին կրկնել, 18:30-ից հետո բոլոր այն անձինք, լրատվամիջոցները, ովքեր կորոնավիրուսի հետ կապված՝ *կտարածեն պաշտոնակալից տարբերվող տեղեկատվություն, կենթարկվեն պատասխանատվության*: Իսկ որ պաշտոնական տեղեկատվությունը 100 տոկոսով համապատասխանում է իրականությանը և այս ընթացքում մենք ոչ մի նշույլ, կներք արտահայտությանս, փռշտոցի մակարդակի ինֆորմացիան կիսել ենք հանրության հետ: Եվ դա արել ենք հատուկ այս նպատակով, որ վստահություն լինի, և մարդիկ պաշտոնական լուրերին հավատան: Եվ կորոնավիրուսի հետ կապված միակ վստահելի աղբյուրը և 18:30-ից հետո միակ աղբյուրը կարող է լինել Կառավարությունը: Որևէ այլ կարգի տեղեկատվության տարածումն արգելվում է: Նման տեղեկատվության տարածումն առաջ կրերի պատասխանատվություն»:

Արդարադատության փոխնախարար Վահե Դանիելյանը մարտին 17-ին տեղի ունեցած ասուլիսի ժամանակ ընդգծել էր, որ նոր կորոնավիրուսային հիվանության հետ կապված տեղեկությունները, այդ թվում՝ միջազգային, գիտական, մասնագիտական, վերլուծական և այլն, **չեն կարող տեղ գտնել հայաստանյան լրատվամիջոցներում**: Հատկանշական է, որ արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված զանգվածային լրատվամիջոցներին առնչվող սահմանափակումների մասին փոխնախարարն ասել էր, թե ՉԼՄ-ները պետք է հաղորդեն միմիայն պաշտոնական տեղեկատվություն՝ հղում անելով պարետատան հրապարակած տեղեկատվությանը, պետական պաշտոնյաներին. «Սա տարածվում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց վրա, այդ թվում՝ սոցիալական ցանցերում հրապարակումներին, որոնք վերաբերում են բացառապես կորոնավիրուսին՝ ՀՀ սահմաններում և դրանից դուրս կոնկրետ վարակված անձանց մասին տեղեկատվությանը, անձանց քանակին և շփման շրջանակին, մեկուսացված անձանց»:

Մարտի 17-ին ՉԼՄ-ների ներկայացուցիչների հետ ևս մեկ հանդիպում-քննարկում էր տեղի ունեցել Արդարադատության նախարարությունում. մինչև վերջ անհասկանալի էր մնացել, թե ՉԼՄ-ները որ տեսակի տեղեկատվությունն իրավունք ունեն հրապարակելու: Ընդգծենք, որ վարակված անձանց ՉԼՄ-ների կողմից չթիրախավորվելու հիմնավորմամբ առկա սահմանափակումներով սահմանվում էր՝ կոնկրետ վարակակիրների մասին, նրանց առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվություն չպետք է հրապարակվի ոչ իրավաբանական և ոչ էլ ֆիզիկական անձանց կողմից: ՉԼՄ-ների կողմից խախտում էր համարվում, եթե կոնկրետ դեպքեր քննարկվեին, մատնանշվեին, թե ինչ առողջական վիճակում է անձը, նրա հետ շփված ինչ շրջանակ կա: Փաստացի, մշտադիտարկվում էին ոչ միայն ՉԼՄ-ների առանձին հրապարակումներ և հաղորդումներ, այլև հարյուր հազարավոր ֆիզիկական անձանց կողմից սոցիալական ցանցերում տեղ գտած հրապարակումները: Եթե ոչ հանրայնացված չափորոշիչներով գտնում էին, որ հրապարակումը ռեժիմի խախտում է, ապա այդ դեպքում դիմում էին ոստիկանությանը, որպեսզի վերացնեն հրապարակումները: Սոցիալական ցանցերի դեպքում օգտահաշիվ ունեցող անձը հրապարակումը կարող էր հանրայինից (public) դարձնել միայն իր իսկ ընկերների համար (friends only), հետևաբար պատասխանատու մարմինները կարող էին և չտեսնել հրապարակումը, քանի որ տվյալ օգտատերի հետ չունեին կապվածություն:

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Հայկ Միրյանի մարտի 23-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ նշվել էր, որ շուրջ մեկ շաբաթվա ընթացքում ոստիկանությունը պահանջել էր հեռացնել **22 օգտատիրոջ և լրատվամիջոցի հրապարակում**՝ այն դիտարկելով որպես խուճապ առաջացնող: Օրինակ, «Aravot.am»-ից պահանջել էին հեռացնել մի հրապարակում, որտեղ ներկայացված է եղել ռուսական մամուլից մի մեջբերում այն մասին, որ Ռուսաստանում թաքցնում են կորոնավիրուսի

հետ կապված տվյալները: Սույն հրապարակումը հաջորդել էր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այն [հայտարարությանը](#), թե արդյոք «վստահ ենք, որ աշխարհի բոլոր երկրները իրենց թվերը ճշգրիտ են ասում»:

Բազմափորձ լրագրող, «Aravot.am» կայքի խմբագիր Աննա Իսրայելյանի հավաստմամբ՝ իրենց այդ տեղեկատվությունը կարող էր խուճապ առաջացնել միայն Ռուսաստանում: Խմբագրի պնդմամբ՝ հայաստանյան մեդիայի հանդեպ արտակարգ դրության պահանջները համաչափ չեն եղել, քանի որ նպատակահարմար կլիներ այդ օրերին խիստ միջոցներ կիրառվեին միմիայն կեղծ ու ոչ ճշտված, անաղբյուր տեղեկությունների հրապարկման համար, փոխարենն արտակարգ դրությունն այդ տեսքով խոսքի ազատության սահմանափակման պայմաններ էր ստեղծել:

Ազգային ժողովի «Իմ քայլ» խմբակցության պատգամավոր Վահագն Թևոսյանն իր [Ֆեյսբուքյան էջում արձանագրել էր](#), որ կառավարության անդամների հետ ակտիվ քննարկման ժամանակ պաշտոնյաներն այդպես էլ չեն կարողացել բացատրել, թե ինչ է նշանակում խուճապ ու ինչ տեսակի նյութեր չի կարելի տարածել խուճապ չառաջացնելու համար²: Հաշվի առնելով նաև այս փաստարկը՝ մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության իրավական ռեժիմի արդյունքում սահմանափակումները մեդիայի համար ստեղծել էին բարդ վիճակ, որը շատ մոտ էր ուղղակի գրաքննությանը, քանի որ պարետատան մոտեցումը ոչ մի կերպ հստակեցված չէր և տարբեր լրատվամիջոցների հանդեպ կարող էր կամայական լինել՝ մի դեպքում կարող էին պահանջել հեռացնել հրապարակումը, մի դեպքում՝ ոչ. չկային հստակ «խաղի կանոններ»:

Արդեն անդրադարձել ենք, որ արտակարգ դրության ժամանակ լրատվամիջոցների աշխատանքին հետևում է պարետատունը, եթե որևէ հրապարակում խուճապ առաջացնող էր, ապա ոստիկանության միջոցով պահանջում էին լրատվամիջոցից հեռացնել այն: Եթե պահանջը չկատարվեր, ապա այդ դեպքում լրատվամիջոցը կարող էր տուգանվել 500-800 հազար ՀՀ դրամի չափով կամ բողոքարկել որոշումը դատական կարգով, սակայն միայն արտակարգ դրության ժամկետից հետո:

Խնդրին անդրադարձել էին նաև լրագրողական կազմակերպությունները: Օրինակ, Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանի կարծիքով՝ առերևույթ առկա էր ընտրովի մոտեցում տեղեկատվություն տարածողների հանդեպ և իրավիճակին ոչ համաչափ գործելաճ: Ըստ Բորիս Նավասարդյանի՝ ամենախիստ միջոցների գնալն արդարացված չէր, պարետատան ներկայացրած դրույթներն իրատեսական չեն եղել ի սկզբանե, իսկ ամբողջ լրատվական դաշտին ֆիզիկապես հետևելն էլ հնարավոր չէ, և պարզ էր, որ այդ իրավիճակում բազմաթիվ հարցեր էին առաջանալու: Փորձագետի բնորոշմամբ՝ տեղեկատվական հոսքերի կառավարման ավելի շատ և ավելի պրոֆեսիոնալ լուծումներ պետք է գտնեին կառավարությունում, քանի որ մեդիայի համար սահմանափակումները **շտապողականության, մակերեսային և ոչ պրոֆեսիոնալ վերաբերմունքի արդյունք էին**:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի մամուլի խոսնակ Մանե Գևորգյանը մարտի 19-ին [հայտնել էր](#), որ պարետատանն ինտենսիվ քննարկվում է լրատվամիջոցների պահանջները և փոփոխությունների անհրաժեշտությունը: Խոսնակի հայտարարությանը արագորեն հետևել էր ՀՀ կառավարության **310 – Ն որոշումը**, որով [փոփոխվել էր](#) արտակարգ դրության ժամանակ լրատվամիջոցներին ուղղված դրույթներից երկուսը. թույլ էր տրվում օգտագործել նոր կորոնավիրուսային

² Աժ պատգամավորի ֆեյսբուքյան էջն ապրիլի վերջից միառժամանակ ապակատիվացած է, սակայն հրապարակումը ջնջված չէ:

հիվանդության մասին միջազգային պաշտոնական աղբյուրներից ստացվող տեղեկությունները: Օրինակ, հետաքրքիր մի դեպք էր արձանագրվել. [TERT.am-ին պարտադրել էին հեռացնել հրապարակում](#) այն մասին, որ հոլիվուդյան դերասան Իդրիս Էլբան չէր բացառել, որ վարակվել է Կանադայի առաջին տիկնոջից:

Կառավարության 298-Ն որոշման հավելվածում կատարվել էին հետևյալ փոփոխությունները՝

23. Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքներից դուրս նոր կորոնավիրուսային հիվանդության վարակման առկա և նոր դեպքերի, անձանց առողջական վիճակի, վարակի աղբյուրների, առկա կամ հնարավոր վարակակիր անձանց հետ շփված այլ անձանց շրջանակի, զննում (վարակի թեստավորում) անցնող անձանց և մեկուսացվածների քանակի, առողջապահության բնագավառում լիազոր մարմնի կողմից իրականացվող միջոցառումների և դրանց վերաբերող տվյալների, ինչպես նաև ակնհայտ խուճապի հանգեցնող կամ խուճապային իրադրություն ստեղծելու իրական վտանգ պարունակող տեղեկությունների վերաբերյալ հրապարակումների, տեղեկատվական նյութերի, հարցազրույցների, հաղորդումների (այսուհետ՝ հաղորդում) հրապարակային տարածումը, փոխանցումը, ներառյալ՝ ինտերնետային կայքերում և սոցիալական ցանցերում դրանց հրապարակումների ձևով, ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների կողմից կատարվում է միայն պարետատան կողմից տրամադրված տեղեկատվությանը (այսուհետ՝ պաշտոնական տեղեկատվություն) հղում կատարելով:

25. Սույն գլխով սահմանված սահմանափակումները չեն կիրառվում՝
1) պետական պաշտոնատար անձանց կողմից կատարված հաղորդումների կամ նրանց հաղորդումներին կատարված հղումների նկատմամբ,
2) օտարերկրյա պետությունների ղեկավարների, պետական մարմինների և (կամ) նրանց ներկայացուցիչների պաշտոնական կայքերին, սոցիալական ցանցերի պաշտոնական էջերին կատարված հղումների նկատմամբ,
3) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված և (կամ) Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ միջազգային կազմակերպությունների պաշտոնական կայքերին, սոցիալական ցանցերի պաշտոնական էջերին կատարված հղումների նկատմամբ:

Լրատվամիջոցները, փաստորեն, մարտի 20-ից սկսած կարող էին պարտադիր հղում տալով հրապարկել օտարերկրյա պետությունների ղեկավարների, պետական մարմինների և նրանց ներկայացուցիչների պաշտոնական կայքերի, սոցիալական ցանցերի պաշտոնական էջերի գրառումները, ինչը նախկինում արգելվում էր:

Այնուամենայնիվ, կառավարության [298 - Ն որոշման](#) հավելվածում տեղ գտած «Զանգվածային լրատվության միջոցներով առանձին հրապարակումների, հաղորդումների արգելքները» վերնագրված գլխի դրույթները շարունակում էր մեդիայի խմբագիրների ու լրագրողական կազմակերպությունների քննադատության թիրախում մնալ: Կառավարության այս որոշումից առաջ [հայտարարություն էին տարածել](#) Հայաստանի լրագրողական կազմակերպությունները և կոչ արել կառավարությանն ու պարետատանն անհապաղ ուժը կորցրած ճանաչել արտակարգ դրության ժամանակ լրատվամիջոցներին ուղղված 23, 24, 25 և 26 դրույթները: Հայտարարությանը միացել էր նաև Հանրային լրագրության ակումբը, որը թեման մշտապես ուշադրության կենտրոնում էր պահում: Հատկանշական է, որ Հայաստանի լրագրողական կազմակերպությունները վերոնշյալ հայտարարության մեջ առաջարկում էին մշակել

տեղեկատվության տարածման ռեժիմը սահմանող նոր կարգավորում, որը կհստակեցնի հնարավոր սահմանափակումները և կնպաստի ՉԼՄ-ների կողմից մասնագիտական գործունեության պատշաճ իրականացումը:

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ Աշոտ Մելիքյանի բնորոշմամբ՝ ՉԼՄ-ներին վերաբերող հաստատված ռեժիմը ոչ հստակ դրույթներ էր պարունակում, որոնք կարող են կամայական գործողությունների առիթ դառնալ: Ըստ նրա՝ ակնհայտ է, որ ոստիկանությունն էր որոշում, թե տվյալ զանգվածային լրատվամիջոցի հրապարակումը կարող է խուճապ առաջացնել, թե ոչ, և ոստիկանությունն էլ պահանջում էր հեռացնել դրանք:

«Սա շատ վատ նախադեպ է, և կարծում եմ, որ հայաստանյան լրատվամիջոցները դեռ երկար կարող են զգալ սրա հետևանքները»,- [նշել էր](#) ԽՄԴԿ-ի նախագահ Աշոտ Մելիքյանը՝ դրանով խոսքի ազատության լուրջ սահմանափակումների հանգեցնելու վերաբերյալ մտահոգություն հայտնելով:

Մեդիայի գործունեության սահմանափակման վերաբերյալ նոր փոփոխություններ տեղի ունեցան մարտի 24-ի կառավարության [345 - Ն որոշմամբ](#), որը մեղմացնում էր սահմանափակումները ՉԼՄ-ների համար: Սրան նախորդել էր նաև միջազգային կառույցների կողմից ճնշումը: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) ազատության հարցերով ներկայացուցիչ Հարլեն Դեպիը [մտահոգություն էր հայտնել](#) համավարակով պայմանավորված և ապատեղեկատվության դեմ պայքարի նպատակով ներդրված քրեական և վարչական օրենսգրքերում փոփոխությունների փաթեթի վերաբերյալ: «Միայն իշխանությունների կողմից տրամադրված տեղեկատվության հրապարակումը շատ խիստ միջոց է, որը կսահմանափակի լրատվամիջոցների ազատությունը և անհամաչափ կդարձնի տեղեկատվության հասանելիությունը»,- ասվում էր հայտարարության մեջ:

Լրագրողական [միջազգային մի շարք այլ կառույցներ ևս](#) քննադատական հայտարարություններ տարածեցին՝ իրենց մտահոգությունն հայտնելով այն առնչությամբ, որ կառավարությունները, օգտվելով կորոնավիրուսի համավարակի հետ կապված իրավիճակից, պատժում են անկախ և քննադատությամբ հանդես եկող լրատվամիջոցներին, սահմանափակում են կառավարության որոշումներին և գործողություններին դրանց միջամտությունը:

ՀՀ կառավարության [345 - Ն որոշմամբ](#) նոր խմբագրության էին ենթարկվել մեդիայի աշխատանքի սահմանափակումներին վերաբերող 23-րդ և 24-րդ կետերը, իսկ 26-րդ կետն ուժը կորցրած էր ճանաչվել:

Կառավարության [298 - Ն որոշման](#) հավելվածում տեղ գտած «Չանգվածային լրատվության միջոցներով առանձին հրապարակումների, հաղորդումների արգելքները» գլխում 23-րդ և 24-րդ կետերի նոր շարադրանքն ուներ հետևյալ խմբագրությունը.

23. Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության վարակման առկա և նոր դեպքերի, անձանց առողջական վիճակի, վարակի աղբյուրների, առկա կամ հնարավոր վարակակիր անձանց հետ շփված այլ անձանց շրջանակի, զննում (վարակի թեստավորում) անցնող անձանց և մեկուսացվածների քանակի, առողջապահության բնագավառում լիազոր մարմնի կողմից իրականացվող միջոցառումների և դրանց վերաբերող տվյալների վերաբերյալ հրապարակումների, տեղեկատվական նյութերի, հարցազրույցների, հաղորդումների (այսուհետ բոլորը միասին՝ հաղորդում) հրապարակային

տարածումը, փոխանցումը, ներառյալ ինտերնետային կայքերում և սոցիալական ցանցերում դրանց հրապարակումների ձևով, զանգվածային լրատվության միջոցների կողմից կատարվում է միայն պարետատան տրամադրած տեղեկատվության (այսուհետ՝ պաշտոնական տեղեկատվություն) հղումով՝ ամբողջությամբ արտացոլելով պաշտոնական տեղեկատվությունը (առանց խմբագրման):

24. Չանգվածային լրատվության միջոցների կողմից սույն որոշման 23-րդ կետով նախատեսված հաղորդումներն առանց պաշտոնական տեղեկատվության հիմքի հրապարակելու դեպքում՝ ՉԼՄ-ները պետք է հրապարակեն պարետատան կողմից այդ հաղորդման մեջ պարունակող տեղեկությունների վերաբերյալ տրամադրված, հրապարակված հերքումը կամ պարզաբանումը՝ այն ստանալուց/հրապարակվելուց հետո 2 ժամվա ընթացքում: Միաժամանակ, ՉԼՄ-երը պետք է ապահովեն վերջինիս տարածումը նույն հարթակներով, ինչ կիրառվել է հաղորդման հրապարակման ժամանակ:

24.1. Օտարերկրյա զանգվածային լրատվամիջոցների կողմից նոր տիպի կորոնավիրուսի համավարակի վերաբերյալ հրապարակված տեղեկատվական կամ վերլուծական նյութերի ամբողջական կամ մասնակի արտատպման դեպքում ՉԼՄ-ները պետք է հրապարակեն նյութի սկզբնաղբյուրը՝ նյութի վերնագրում:

Մասնավորապես, պարտադրվում էր ՉԼՄ-ներին աղբյուրը նշել վերնագրում, եթե կորոնավիրուսի վերաբերյալ հրապարակումներ էին վերատպվում օտարերկրյա մեդիայից: Եթե հրապարակվում էր մեկուսացված, ինքնամեկուսացված, վարակակիր Հայաստանի քաղաքացիների ու համաճարակային միջոցառումների մասին տեղեկատվություն, ապա անհրաժեշտ էր հղում անել միայն պարետատան տրամադրած տվյալներին՝ ամբողջությամբ արտացոլելով պաշտոնական տեղեկատվությունը (առանց խմբագրման): Բացի այդ նոր կորոնավիրուսային հիվանդության վերաբերյալ հրապարակումներում պետք էր անպայման լինի նաև պարետատան պարզաբանումը կամ հերքումը՝ ՉԼՄ-ների կողմից այն ստանալուց 2 ժամվա ընթացքում:

Լրագրողական կազմակերպությունների և մեդիայի կողմից փոփոխությունները ողջունելի էին, թեև շարունակում էին ենթադրել որոշակի սահմանափակումներ: Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանի [խոսքով](#)՝ փոփոխությունները լիովին ընդունելի էին, քանի որ արտակարգ դրության ժամանակ առաջնայինը ոչ թե լրատվամիջոցների կամ իշխանությունների շահն է, այլ հանրային շահը. «Պարզ է, որ արտակարգ դրության պայմաններում պիտի սահմանափակումներ ու խստացումներ լինեն»: Բորիս Նավասարդյանի պնդմամբ՝ շատ կարևոր էր պարտադրել նաև պաշտոնական տեսակետի ներառումը, քանի որ այդպես է հնարավոր իրազեկել լսարանին:

«ՊանԱրմենիան» կայքի գլխավոր խմբագիր Նիկոլայ Թորոսյանի կարծիքով՝ արտակարգ դրության ժամանակ բացասական և մոլորեցնող տեղեկատվության հոսքը սահմանափակելը միանգամայն հասկանալի է, թեև շատ դեպքերում այն ուղղակի անհնարին է. «Նոր փոփոխությունները պարզաբանում և թեթևացնում են սահմանափակումները՝ թույլ տալով պաշտոնականից բացի հրապարակել նաև արտասահմանյան նյութեր: Նախկինում բացի Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տեղեկություններից՝ մնացած ամեն ինչը նշանակում էր արտակարգ դրության խախտում»: Խմբագրի համար անհասկանալի էր, թե ինչու չէր կարելի հրապարակել պարետատան հաղորդագրությունները որոշակի խմբագրմամբ:

Նոր փոփոխությամբ հստակեցվել էր նաև լրատվամիջոցների կողմից սահմանափակման կանոնները չկատարելու դեպքում [պատասխանատվության չափը](#). տուգանքի չափը կազմում էր 100-300 հազար դրամ, իսկ եթե լրատվամիջոցը տուգանքից հետո էլ չհեռացներ հրապարակումը, ուրեմն՝ նորից կտուգանվեր՝ արդեն 500 հազարից մինչև 1 մլն ՀՀ դրամի չափով:

Հատկանշական է, որ [պարետի որոշմամբ](#) մարտի 25-ից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում սահմանափակվեց մարդկանց ազատ տեղաշարժվելու իրավունքը և սահմանվեց անձանց պարտադիր ինքնամեկուսացում իրենց մշտական բնակության կամ իրենց նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի հնարավոր տարածումը կանխելու նպատակով: Փոխվարչապետ, ՀՀ պարետ Տիգրան Ավինյանի խորհրդական Սուրեն Քրմոյանի խոսքով՝ յուրաքանչյուր անգամ տանից դուրս գալիս քաղաքացիները պետք է լրացնեն [տեղաշարժման թերթիկները](#), և նաև այն անձինք, ովքեր թույլատվություն ունեն տանից դուրս գալու համար: ՀՀ փոխոստիկանապետ Հայկ Միրյանը մարտի 25-ին կայացած [մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց](#), որ լրագրողների կամ լրագրողական գործունեություն իրականացնողների դեպքում տեղաշարժման թերթիկի առկայությունը պարտադիր չէ, եթե նրանք իրենց մոտ ունենան «բեյջ» և դա ցույց կտան ոստիկաններին: Ավելի ուշ տեղաշարժման և գործատուի կողմից լրացվող թերթիկները պարտադիր բնույթ դարձան նաև լրագրողների և լրագրողական գործունեություն իրականացնողների համար. միառժամանակ լրատվամիջոցները և լրագրողները իրենց հրապարակումները և հաղորդումները պատրաստում էին տնից, իսկ լրագրողական աշխատանքը՝ որպես թույլատրելի գործունեություն չէր նշվել պարետի որոշման մեջ:

Արտակարգ դրության պայմաններում ՉԼՄ-ների առանձին հրապարակումների և հաղորդումների նկատմամբ կիրառված արգելքները շարունակվեցին 2020թ.-ի ապրիլի 13-ը: Կառավարության [543 - Ն որոշումը](#), ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունում 30 օրով՝ մինչև 2020 թվականի մայիսի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով երկարաձգվում էր արտակարգ դրությունը, ՉԼՄ-ներին վերաբերող 7-րդ գլուխն ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչեց:

Հատկանշական է, որ արտակարգ դրության իրավական ռեժիմի ընթացքում «Մեդիա պաշտպան» նախաձեռնությունը պարետատան կողմից հայաստանյան լրատվամիջոցների գործունեությունը սահմանափակելու դեպքերի [մոնիթորինգ էր իրականացնել](#) և օր առ օր հրապարակել արդյունքը Ֆեյսբուքի պաշտոնական էջում: Ապրիլի 13-ին, սակայն, նախաձեռնություն [հայտարարել էր](#), որ «դադարեցնում է պարետատան և լրատվականների ինտենսիվ մշտադիտարկումը»:

Կառավարության հատուկ նիստին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը [նշել էր](#), որ նոր որոշմամբ ընդհանրապես վերացվում են ՉԼՄ-ների վրա նախկինում դրված սահմանափակումները՝ պայմանով, որ մոնիթորինգ կիրականացվի՝ հասկանալու համար, թե ինչքանով են այս ընթացքում լրատվամիջոցները և հանրությունը կարողացել ադապտացվել լրատվական պատեհ քաղաքականությանը. «Եթե հանկարծ կտեսնենք դրսևորումներ, որ ռիսկեր են առաջացնում, կառավարության որոշման մեջ փոփոխություններ կիրականացնենք և վերջին գործող ռեժիմը կվերականգնենք»: Մայիսին, երբ երկրորդ անգամ էր երկարաձգվում արտակարգ դրությունը ևս 30 օրով՝ մինչև 2020 թվականի հունիսի 13-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով, նախկինում առկա ՉԼՄ-ների առանձին հրապարակումների և հաղորդումներին սահմանափակումներին այլևս անդրադարձ չեղավ կառավարության [729 – Ն որոշման](#) շրջանակում: Չնայած պետք է նշել, որ ՀՀ վարչապետի կողմից մատնանված

մշտադիտարկման մասին առայժմ հասանելի տվյալներ չկան, փոխարենը զգալիորեն շատացել է սոցիալական ցանցերում տարածվող ապատեղեկատվությունը՝ COVID-19 համավարակի տարածման, ստեղծման և վարակվածների մասին:

Ներկայում հայաստանյան մեդիան աշխատում է առանց սահմանափակումների, սակայն չկա հստակ թիվ, թե քանի լրատվամիջոց կամ ֆիզիկական անձ է դատական կարգով վիճարկելու պարետատան մեդիայի աշխատանքի սահմանափակման որոշումներն արտակարգ դրության ավարտից հետո:

❖ Մեդիայի աշխատանքի սահմանափակումն աշխարհում

Նոր կորոնավիրուսային հիվանդության տարածմամբ պայմանավորված աշխարհի շատ երկրներ որպես կանխարգելիչ գործողություն իրականացրին ամբողջական կամ մասնակի կարանտին և հանրության մեկուսացում՝ խրախուսելով մարդկանց մնալ տանը և չնպաստել կորոնավիրուսի տարածմանը: Այդ արտակարգ միջոցումների ժամանակ որոշ դեպքերում և որոշ երկրներում ՉԼՄ-ների աշխատանքը սահմանափակվեց: Լրագրողներ առանց սահմանների կազմակերպությունը մարտի 31-ից [գործարկել է հատուկ հարթակ](#), որով փորձ է կատարվում ստուգելու «COVID-19»-ի ազդեցությունը մեդիայի գործունեության վրա և մեկտեղելու արձանագրված խնդիրները, ամենը քարտեզագրելու երկիր առ երկիր: Հարթակը կոչվում է «[Tracker 19](#)» և լայվ ռեժիմում մշտապես թարմացվում է: Եվրոպական երկրներից այստեղ են հայտնվել ժողովրդավարության ցուցանիշով ոչ ամենևին օրինակելի Հունգարիան և Բելառուսը: Հայաստանն այս ցանկում չկա:

Հատկանշական է, որ համաճարակի սկսվելուց ի վեր Բելառուս լրագրողները պետական հաստատությունների գործունեության թափանցիկության ավելի մեծ պակաս են զգացել: Առողջապահության նախարարությունը դժկամորեն է պատասխանում լրագրողների հարցումներին, կանոնավոր կերպով թվեր չի ներկայացնում դեպքերի վերաբերյալ՝ ստեղծելով տեղեկատվական բաց, որը նպաստում է կեղծ լուրերի տարածմանը: Անգամ նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն ինքն է ներդրում ունեցել ապատեղեկատվության տարածման հարցում: Մարտի 16-ին ունեցած ելույթում նա ասել էր, թե «տրակտորը կբուժի բոլորին»՝ նկատի ունենալով տարբեր ոլորտների ենթադրաբար առողջ աշխատանքը, և հերքել էր կորոնավիրուսի կողմից առաջ բերված վտանգը: Նույն ելույթում նա խորհուրդ էր տվել մարդկանց խմել օդի կամ շոգեբաղնիքով՝ վիրուսի դեմ պայքարելու համար: Ի դեպ, առողջապահական ճգնաժամը հանգեցրել է ավելի կոշտ մեթոդների կիրառման, ինչպես ցույց է տալիս [Մերգել Սագուկի գործը](#): Նա հայտնի է որպես երկրի առողջապահության համակարգի մասին իրականացրած հետաքննության հեղինակ, բայց նրան ներկայում սպառնում է 10 տարվա ազատազրկում, քանի որ «Եժեդնենիկ» առցանց հարթակում նա խմբագրական էր հրատարակել և կասկածներ էր առաջացրել երկրի ներկայացրած պաշտոնական տվյալների վերաբերյալ: Նա նաև քննադատել էր նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի այն հրամանագիրը, որով երկրի հատուկ ծառայությունը պետք է հստակ «գործ ունենար» համավարակը «սխալ դիտանկյունից» լուսաբանող լրատվամիջոցների հետ՝ մեղադրելով «խուճապ սերմանելու» համար:

Պակաս հետաքրքիր չէ Հունգարիան: Վարչապետ Վիկտոր Օրբանն [օգտագործել է համաճարակը](#)՝ մամուլի ազատությունը ճնշելու համար: «Կորոնավիրուսի մասին» ընդունված արտակարգ օրենքը, ի թիվս այլ բաների, թույլ է տալիս Եվրամիության անդամ այս երկրին հինգ տարվա ազատազրկմամբ պատժելու կեղծ լուրերի հրապարակման համար: Գործադիր մարմինն ինքն է, առաջին հերթին, որոշում

կայացնելու, թե արդյոք հրապարակումը ճշմարիտ է կամ կեղծ: Այս եղանակով օրենքը թույլ է տալիս կառավարությանը անմիջական վերահսկողություն տակ վերցնել լրատվամիջոցների գործունեությունը՝ թույլ չտալով ՉԼՄ-ներին իրազեկելու հանրությանը, ինչպես հարկն է: Օրենքը թույլ է տալիս կառավարությանը ոչնչացնել անկախ լրատվամիջոցներին և ոչ ցանկալի տեղեկատվությունն անհապաղ կարգով: Տեղեկատվության մատչելիությունը հատկապես դժվար է անկախ լրագրողների համար, քանի որ արգելված է նրանց մասնակցությունը կարևոր իրադարձություններին և խորհրդարանի անդամների հետ խոսակցություն չի կարելի: Ավելին, այս երկրում իշխանամետ ՉԼՄ-ները կոչ են անում ձերբակալել այն քննադատ լրագրողներին, որոնց Հունգարիայում սկսել են անվանել «դժբախտ ապուշներ»:

Նոր կորոնավիրուսային հիվանդությունն օգտագործվում է նաև մեկ այլ Եվրամիության անդամ երկրի ղեկավարության կողմից ինֆորմացիայի ազատությունը սահմանափակելու համար: 2020թ.-ի մարտի 16-ին Ռումինիայի նախագահ Կլաուս Վերներ Իոհաննիսը [ստորագրել է արտակարգ դրության մասին հրամանագիր](#), որը, ի թիվս այլ միջոցառումների, թույլ է տալիս Վարչարարության և կապի կանոնակարգման ազգային մարմնին (ANCOM) արգելափակել այն կայքերը, որոնք «կեղծ լուրեր» են պարունակում: Լրագրողների եվրոպական ֆեդերացիան (EFJ) [կարծիք է հայտնել](#), թե կառավարություններն իրավացի են այս շրջանում լուծելու ապատեղեկատվությունը, սակայն այս միջոցները կարող են հանգեցնել [մեծածավալ ինքնագրաքննության](#): Պետական իշխանությունները կարող են գայթակղվել սահմանափակումներով ՉԼՄ-ների լիազորությունները ճնշելու հարցում, որը շեղում է պաշտոնական դիրքից և փորձում է արվում մեդիային պատասխանատվության ենթարկել: ՄԱԿ-ի [մարդու իրավունքների հարցերով փորձագետները](#) և [մարդու իրավունքների պաշտպանության գրառվող տարբեր խմբեր](#) բարձրաձայնել են, որ համավարակի արդյունքում տեղի ունեցած արագ փոփոխությունները մարդու իրավունքների սահմանափակման իրական վտանգներ են պարունակում, և բազմաթիվ խնդրահարույց նախագծեր տարբեր երկրներում վերածվում են օրենսդրական կարգավորման:

Ռումինիայի Անկախ լրագրության կենտրոնը [հայտարարություն էր տարածել](#), թե արտակարգ դրության իրավական ռեժիմը թույլ է տալիս երկրի ղեկավարությանը համաճարակի հետ կապված «կեղծ տեղեկությունների» առցանց տարածումը կանխարգելիչ դրույթներով կանոնակարգել, որը, սակայն, թույլ է տալիս ոչ միայն առանձին հրապարակումներ և հաղորդումների, այլ կայքերի ամբողջական արգելափակում. «Որոշումը հակասական էր և մեծ շոկ առաջացրեց լրատվամիջոցների համար, քանի որ այդպիսի սահմանափակումների մասին խոսակցությունները նախ, հերքվում էին պետական պաշտոնյաների կողմից արտակարգ դրության հրամանագրի հրապարակումից մեկ օր առաջ: ANCOM-ը՝ որպես կապի ենթակառուցվածքների կառավարիչ չունի նախևառաջ փորձ, ապատեղեկատվություն պարունակող հրապարակումների խնդիրը լուծելու հարցում, սակայն այն պատասխանատու է բովանդակության վերացման աշխատանքների իրականացման համար: Ոչ մի բողոքարկման և փոխհատուցման մեխանիզմ չի տրամադրվել»:

Ըստ Ռումինիայի կառավարության՝ ANCOM-ը պարզապես [իրականացնելու էր բովանդակության հեռացում](#)՝ հիմնվելով Ռազմավարական հաղորդակցության խմբի կողմից ստացվող առաջարկությունների վրա, որը հատուկ կառավարական մարմին է ստեղծված համավարակի համապարփակ կառավարման գործողությունների շրջանակում:

Ինֆորմացիայի ազատ հասանելիության սահմանափակումներ են իրականացվել ոչ միայն Հունգարիայում, Բելառուսում և Ռումինիայում: Բուլղարիայում, Եվրամիության

մեկ այլ երկիր, որտեղ վերջերս մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը նախագուշացրեց ՉԼՄ-ների ազատության վիճակի վատթարացման մասին, կառավարությունն օգտագործեց արտակարգ դրությունը՝ փորձելով փոփոխել քրեական օրենսգիրքը և ազատագրելու իրականացնել այն բանի համար, որ ինչ-որ մեկը տարածում է կամ ՉԼՄ-ների կողմից հրապարակվում է կեղծ նորություն համավարակի վերաբերյալ: Ապատեղեկատվության տարածման համար հնարավոր է մինչև երեք տարի ազատագրելու կամ տուգանք՝ մինչև 5000 եվրո:

Ի տարբերություն վերոնշյալ օրենքի փոփոխության, որը միայն ուղղված կլիներ վիրուսին վերաբերող «կեղծ լուրերին», նոր օրինագծով պատրաստում էին քրեականացնել առցանց տարածված «կեղծ տեղեկությունների» բոլոր ձևերը: Օրինագծի համաձայն՝ եթե մեղավոր են ճանաչվել լրատվամիջոցների սեփականատերերը, ապա կարող են պատժվել մինչև 1000 եվրո տուգանքով և երեք տարի ազատագրկամաբ:

Իսպանիայում, որը վարակակիրների թվով առաջատարների շարքում էր մի որոշ ժամանակ, երկրի մի շարք առաջատար լրատվամիջոցներ [միացել էին](#), որպեսզի դատապարտեն այն, ինչ նրանք անվանում էին «գրաքննություն» այն լրագրողների հանդեպ, ովքեր փորձում էին սուր հարցեր տալ երկրի վարչապետին մամուլի ասուլիսների ընթացքում՝ վիրուսի կառավարման խնդիրները ուղիղ մատնանշելով: Նմանատիպ սահմանափակումներ են եղել լրատվամիջոցների և լրագրողների դեմ Չեխիայում, Բոսնիա և Հերցեգովինայում և Սլովենիայում: ՉԼՄ-ների՝ որոշումներ կայացնողների գործողությունները կասկածի տակ առնելու, կառավարության կողմից վիրուսի տարածումը ճիշտ մեթոդներով կանխելու և վարելու վերաբերյալ այդ երկրներում չեն ողջունվել՝ հանդիպելով մեծ դիմադրության:

2020 թ.-ի մարտի 10-ին Հոնդուրասի նախագահ Խուան Օռլանդո Էռնանդեսը սանիտարական արտակարգ դրություն էր [հայտարարել](#)՝ պայմանավորված նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակով: Մարտի 16-ին նա [մեկ այլ հրամանագիր](#) էր ստորագրել, որով սահմանափակում էին սահմանադրական մի շարք իրավունքներ, ներառյալ՝ ազատ արտահայտման, հավաքների և շարժման ազատությունները: Երկրում ընդունված միջոցառումները ներառում էին ցանկացած չափի հասարակական կամ մասնավոր հավաքույթների արգելում: Ազգային և միջազգային մի շարք ճնշումներից հետո կառավարությունը [վերափոխեց](#) հրամանագիրը 2020 թվականի մարտի 21-ի՝ վերահաստատելով խոսքի ազատության հետ կապված սահմանադրական երաշխիքները:

2020 թվականի մարտի 16-ին Հոնդուրասի նախագահ Խուան Օռլանդո Էռնանդեսը հրապարակեց մեկ այլ [հրամանագիր](#), որը արտակարգ դրություն էր նախատեսում յոթ օր՝ նոր կորոնավիրուսային (COVID-19) հիվանդության տարածման պատճառով: Սահմանափակվում էին Հոնդուրասի սահմանադրությամբ նախատեսված մի քանի սահմանադրական երաշխիքներ, ներառյալ 72-րդ հոդվածը, որը պաշտպանում է ազատ արտահայտվելու իրավունքը՝ առանց գրաքննության: Ինչպես և Հայաստանում, Հոնդուրասում սահմանափակվել էր նաև լրագրողների տեղաշարժի իրավունքը: Միայն ապրիլի 5-ին կառավարությունը [հայտարարեց](#), որ լրատվամիջոցների ներկայացուցիչներն իրենց հավատարմագրերով կկարողանան գործունեություն ծավալել նաև պարետային ժամերի ընթացքում:

Ապրիլի 17-ին C-Libre կազմակերպությունը հաղորդեց, որ իրենք գրանցել են առնվազն 11 իրավախախտում այն լրագրողների դեմ, ովքեր հրապարակումներ և լուսաբանում էին պատրաստում «COVID-19»-ի վերաբերյալ: Այս բոլոր դեպքերում, [ըստ C-Libre](#)

կազմակերպության հայտարարության, պետական պաշտոնյաները պատասխանատու էին լրագրողների աշխատանքի սահմանափակումների համար:

❖ Եզրահանգումներ

Հայաստանում ՉԼՄ-ների գործունեությունը սահմանափակելով և խստորեն վերահսկելով անգամ ֆիզիկական անձանց կողմից տարածվող տեղեկատվությունը, այդ թվում՝ սոցիալական ցանցերում, ՀՀ պարետատունը նպատակ ուներ նվազեցնելու ասպատեղեկատվությունը: Համենայն դեպս, նշյալ սահմանափակումների կիրառումն այդպես էին հիմնավորում ՀՀ վարչապետը և պարետատունը: Արդյո՞ք սահմանափակումները թույլ տվեցին միառժամանակ խուսափելու ասպատեղեկատվության տարածումից, հանրային միջավայրում կեղծ լուրերի հայտնվելուց: Հարցի պատասխանը հստակ է՝ ոչ, քանի որ համացանցի ամենուր հասանելիությունը թույլ չի տալիս պետական մարմիններին ամբողջական վերահսկում սահմանել, հետևաբար տեղի էր ունենում ընտրողական մոտեցում, իսկ այդ պարագայում հնարավոր են մի շարք վիճարկելի որոշումներ:

Բացի այդ, մեղիափորձագետները և ոլորտային մասնագետները պնդում են, որ Հայաստանում ՉԼՄ-ների գործունեության սահմանափակման որոշումն ընդունվել է առանց մեղիափորձի մի շարք առանցքային դերակատարների ու անկախ փորձագետների հետ քննարկումների: Փոխարենը մի խումբ ոլորտային մասնագետների կարծիքները լսելի է եղել post factum տարբերակով, երբ արդեն մեղիայի ներկայացուցիչները, հասարակական կազմակերպությունները և միջազգային կառույցները տարածեցին առկա սահմանափակումները դատապարտող հայտարարություններ: Հատկանշական է, որ միայն այդ հայտարարություններից հետո տեղի ունեցան քննարկումներ և կարծիքների փոխանակություն, արդյունքում՝ որոշակիորեն թուլացան սահմանափակումները, ավելի ուշ էլ ամբողջությամբ վերացան: Այս համատեքստում կարևոր է ընդգծել, որ ցանկալի է որոշումներն ընդունել ներգրավման մեթոդով, երբ պատասխանատու գերատեսչությունները ոլորտային որոշումներ կայացնում են ոլորտի ներկայացուցիչների և շահառուների անմիջական ներգրավմամբ՝ ապահովելով վերջիններին մասնակցայնությունը որոշումների կայացմանը: Սա սկզբունք է, որը միջազգային կառույցների խորհրդատվականներում մշտապես ընդգծվում է:

Փորձագիտական համայնքը պնդում է, որ տեղեկատվական հոսքերի կառավարման ավելի շատ և ավելի պրոֆեսիոնալ լուծումներ պետք է գտնելին կառավարությունում, քանի որ մեղիայի համար նոր «խաղի կանոնները» հստակ չէին, սահմանափակումները **շտապողականության, մակերեսային և ոչ պրոֆեսիոնալ վերաբերմունքի արդյունք էին:**

Ստեղծված սահմանափակումների պայմաններում առանձնահատուկ կարևոր էր պետական բոլոր գերատեսչությունների կողմից պատշաճ պատասխանելը ՉԼՄ-ների և քաղաքացիների կողմից տեղեկատվության ստացման հարցումներին: Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի յիարժեք կիրառման անհրաժեշտությունն առավել կարևորվել է արտակարգ դրության ժամանակ, այն էլ այն դեպքում, երբ ՉԼՄ-ների գործունեությունը սահմանափակված էր: Արտակարգ դրության պայմաններում տեղեկությունների տրամադրումը, սակայն, դարձել է շատ ավելի խնդրահարույց, քանի որ գերատեսչությունները հաճախ ուղղակի ցանկություն չունեն տվյալ տրամադրել: Օրինակ, Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը լրագրողների հարցումներն անհեթեթ է որակել: Այսօրինակ մոտեցումը միանշանակ խրախուսելի չէ պետական մարմինների կողմից, քանի որ սա հիմնավոր կասկածների

տեղիք կարող է տալ առ այն, որ գերատեսչությունը թափանցիկ չի գործում և ցանկություն չունի հաշվետվողական լինել հանրությանը:

Հաշվի առնելով մարտի 16-ից գործող արտակարգ դրության իրավական ռեժիմը և այս ընթացքում առնվազն առաջին մեկ ամիսն ամբողջությամբ՝ սկզբում բավականին խիստ, այնուհետև որոշակի թուլացված կարգավորմամբ կիրառված ՉԼՄ-ներում համավարակի մասին հրապարակումների և հաղորդումների սահմանափակումները՝ կարող ենք այսօր կանխատեսել, որ 2021-ին կունենանք որոշակի հետընթաց «Freedom House» միջազգային իրավապաշտպան կազմակերպությանը ժողովրդավարության ինդեքսի վերաբերյալ տարեկան զեկույցում: Ի դեպ, այս տարի մայիսին կազմակերպությունը հետխորհրդային երկրների ժողովրդավարության բարելավման վերաբերյալ իր զեկույցում շատ բարձր էր գնահատել Հայաստանի վերջին երկու տարիների ձեռքբերումներն այս ոլորտում: «Անցումային երկրներ 2020» զեկույցի առնչությամբ կազմակերպությունն [ընդգծել էր](#), որ Հայաստանն արձանագրել էր պատմության մեջ ժողովրդավարության բարելավման երկամյա ամենաբարձր ցուցանիշը:

Վստահաբար, ՉԼՄ-ների և ֆիզիկական անձանց կողմից տեղեկատվության ազատ ստացման և տարածման հանդեպ կիրառված սահմանափակումները կարող են հստակորեն ազդել նաև մի շարք այլ միջազգային կազմակերպությունների հետագա զեկույցներում Հայաստանի վարկանիշի վրա: Այս համատեքստում կարող է հետաքրքրական լինել հայտնի «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային կազմակերպության Մամուլի ազատության ինդեքսի փոփոխությունը: Թե 2019-ին, թե 2020-ին Հայաստանը եղել է 61-րդ հորիզոնականում: 2018 թվականի արդյունքներով Հայաստանը 19 կետով առաջընթաց էր գրանցել՝ 2017-ի 80-րդ տեղից բարձրանալով 61-րդ հորիզոնական:

Համաշխարհային փորձը ևս ցույց է տալիս, որ համավարակի դեմ պայքարը հաճախ տարբեր ոչ ժողովրդակալարական արժեքներ կրող երկրների կառավարություններ փորձել են օգտագործել և շարունակում են օգտագործել տեղական, անկախ, ոչ իշխանամետ ՉԼՄ-ների գործունեությունը և ընդդիմախոսների խոսքի ազատությունը սահմանափակելու համար:

Թերևս տեղին է ընդգծել, որ մեդիայի գործունեության սահմանափակումը Հայաստանում շատ վատ նախադեպ է, և հայաստանյան լրատվամիջոցները դեռ երկար կարող են զգալ դրա հետևանքները:

Հեռագրությունը պատվիրակող՝ Հանրային լրագրության ակումբ

Հեռագրություն իրականացնող՝ Հարություն Ծատրյան

Հեղինակը փաստերի ստուգման մասնագետ է, լրագրող: Ներկայում գրադիվում է Հայաստանում ապատեղեկատվության դեմ պայքարի մեխանիզմների ուսումնասիրմամբ՝ պատրաստելով մեծ զեկույց ամերիկյան «Փոյնթեր Ինստիտուտ» հաստատության համար:



Այս հեռագրությունը պատրաստվել է «Կովիդ-19. արագ արձագանքում» ծրագրի շրջանակներում՝ Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի աջակցությամբ:

Այստեղ արտահայտված տեղեկությունները և կարծիքները ներկայացված են Հանրային լրագրության ակումբի և հեղինակի կողմից և պարտադիր չէ, որ դրանք համընկնեն Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Երևան, 2020

Հանրային լրագրության ակումբ